

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՔՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ԱՔՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

_____ N ____-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՔՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածի,
Արժվյան համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արժվյան համայնքի
վարչական տարածքում պետական կամ համայնքային կարիքների համար՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով
հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին
համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական
շինությունների շինարարության (տեղադրման) թույլտվության համար 2025
թվականի համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ
կիրառվում է արտոնություն՝ տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ
գրոյական դրույքաչափի կիրառմամբ,

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով
հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին
համապատասխան՝ նոր շենքերի և շինությունների շինարարության
թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում
ոչ ամբողջական) համար 2025 թվականի համար սահմանված տեղական
տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական
տուրքի դրույքաչափի նկատմամբ գրոյական դրույքաչափի կիրառմամբ,

3) Գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման,
վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման
աշխատանքների թույլտվության համար 2025 թվականի համար սահմանված
տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝
տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ գրոյական դրույքաչափի
կիրառմամբ,

4) Շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների
քանդման թույլտվության համար 2025 թվականի համար սահմանված
տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝
տեղական տուրքի դրույքաչափի նկատմամբ գրոյական դրույքաչափի
կիրառմամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը

հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ